

ւորը շարադրել է Նայրանդեանը իւր մահ-
ուանից քիչ առաջ: Լայր աղօթքը յայտնի է
եղել Նոր Նախիջևանում: սակայն ձեռագրի
մէջ այդ տողերը գրող մեծարդոյ պ Փ. Ա.
ցաւելով յայտնում է, որ ինքը միայն այդ
երկու տունը գիտէ, շարունակութիւնը մո-
ռացել է: Ահա այդ «Տէր ողորմեան»:

«Աստուած հօգօր» երկայնամիտ:
Լորը քաղձանաց մեր միամիտ
չնս օգնութիւն թշուառ հային:
չալածէ մեր շար թշնամին:

Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Եւ թէ մօտ է մեր օրհասը
Եւ մեզ սպասէ դստն թասը,
Գոնէ տուր մեզ արիութիւն
Վըկայ լինել մեր հաատոյն:
Տէր ողորմեան . . .



ՆՈՐ ՏԱՐԻ


(Նեկրաստուից):

Մաշուում է կեանքը, հալուում՝ ամէ ցամ:
Տըկար է միտքը, սառուում է արին . . .
Ես՝ Մայր չայրենիք՝ կ'իջնեմ՝ գերեզման՝
Չըտեսած քանցք քո ազատութիւն:

Բայց ես կ'ուզեի — գէթ իմ՝ օրհասին
Դու ոտ կոխէիր հաստատ մանապարհ,
Տանջանքից յետոյ դու քո առաջին
Տեսնէիր քացուած քո օրը պայծառ.

Կ'ուզեի — գէթ այժմ՝ հասցնէր քամին
չայրենի գիւղից մի ձայնիկ միայն:
Որ ինձ չըթերէր նոր բօթ ցաազին
Դսուն արտասուքի՝ ծովացած արեան . . .

Յ. ՅՈՒՆՏՆՈՍՅԱՆ.



ՆՈՐ ՏԱՐԻ*

(Պատկեր Շիրակի գեղարկան կեանքից):

Իրիկուայ մալի ալֆի վաղը վարժատեն տուն
էի գառնրմ: ցուրտ: Ղարախաչու պոյղ քամին
կատղած փշրմ էր ու ձունը վերեկն քուլայ — քու-
լայ թափրմ էր: Չեռքերս սառել փէտ էին կըտ-
րել: ոչ կրնրմ էի դիպա բերանս տանիմ: փշիմ:
տաքցնիմ: ոչ էլ ղոլղուղիս տակը դնիմ: չուկքի որ,
մէ ձեռքս շանդէս էր՝ մէջը մենձ մայրենիս: դօքս
ու դաւթրներս: մէկէլ ձեռքս էլ կաղամբարս ու
ղալամս: Եդ չէշիտ: թըջուած շան գող տալով հա-
սայ տուն: գոի դուռը բացի: մտայ շուաքը: տան
դուռն էլ որ չբացի՝ ային բէյին էղայ ու մնացի:
ինչի որ մտեղնեղու բունը քանդես ու ընդոնը ի-
րար անցնին ու խառնուին իրար: որը հաւկթները
փակցնէ: որը էս ծակէն էլնի էն ծակը մտնի: էն
չէշիտ էր մեր տնեցոց հալը: որը գունտ էր կըրմ:
որը ձէթ էր բերրմ: որը լախանի թփերն էր խտը-
կըմ ու տօլմա փաթթըմ: Մենձ հօրողբօրս կնիկն
էլ հարս-ապղայիս ու պիճի-անայիս հետ փէշխունի
տակը նստել ու գաթի գնդերը բանրմ էր: օխա-
ւըմ ու ձէթ քըրմ: ծփծփըմ: սարքըմ գաթի իւ-
ղէքը: Խանրմ-ապլան գաթի խորիզն էր տորըրմ:
հարս-խաթունը թընգրի մոխիրն էր քաշըմ ու
հայհայն էր ընկել վառելու: պղտի հարսն ու աղ-
ջըկներու կէսն էլ բոլբուլ էին մենձ փէշխունի չորս
կողմն՝ լօրի ու կարթօլ էին խտրկըմ: Աղջկներու
մնացած կէսն էլ տան մէջ մօրպետութեն էին էնըմ:
տանրմ էին: բերրմ էին: տան միջի արան ցաբան
թափած բաները ժողովում: աւլում էին: Մամս էլ
երկան օխապլմ ձեռն առած տան մէջը տընկտըն-
կալով ման էր գալըմ: ինչղ որ իրողտնեղու վրէն
վերակեցուն: ու բազի բազի ճըվըմ էր: «Աղջի,
Չարթար, գաթէքուն լաւ ձէթ քսէ: որ համով
էղնին: Գիւլի ջան, թէղ էրէք դուք էլ լօրին իս-
տըկէք: պրծէք: թնդիրը վառաւ» ու ես ինչ գիտեմ
էս չէշիտ հաղար ու մէ բան: Սարս ամիս էլ վեր-
ցրել էր մէ երկա՞ն սըրըմ: էդ սըրղի զխուն փաթ-
թել էր ազմ շուլ ու մուլ: ընդուր վրէն էլ գարէ
ալուր էր լցել ու տան մրով սեցած խոշտնեղուն
քոթ-քոթ էր զարկըմ: Մեննակ ես էի: որ պէլա-
ցել մնացել էի ու ես ընձի ընձի զարմանրմ էի թէ
ընչի հըմար ին էս քուլլի: Մէկ էլ մտքովս անցաւ
թէ չէղնի ափօրս նշանել ին: ու ուրախութէնէս
էլ չիմացայ թէ ինչ էնեմ: Գրքերս: կաղամբար —
մաղամբարս մէ կողմ թափի ու վազի մամիս օտները
փաթթուայ ու ըսի: Մամի ջան, էս ընչի՞ հըմար
ին էս քուլլի: էս ինչ թաղարուկ էք տեսնըմ:

* Գ. Ծեմարանի վարչութեան թոյլտուութեամբ տպագր-
ուում ենք այս պատկերը, որ գրել է Չ. դասարանի աշակերտ
Ծ. Մովսիսեանը եւ կաղապարել աշակերտական գրական նրե-
կութիւն:

— Ո՛ւշ, բալա ջան, եկար, ըսաւ մամն. եզուց կաղինդ է, չխեհ, էս քուլլի կաղընդի հըմար է:

— Եզուց կաղինդ է՛, ըսի ու խելառ թողու պէս վեր-վեր թնայ, որ ըզման է՛ խալֆիս խալաթ տանիմ կը եզուց:

— Հա՛, դուրբան եղնիմ քեզի, դու լաւ կարգա՛, ըսաւ մամն, լաւ տղայ եղի, խալֆիդ խալաթ էլ եմ սարքել. ջուխտմ խէտ գուլբայ, յիրեք ջուխտ գաթայ, մէ աղլուղմ ու հետը մարմէմ լիքը մէյվայ. եզուց ցորեկվնից յետե առ ու գնա խալֆիդ կաղինդը շնհաւորէ:

Եզ հաղաղեցայ աչքս ընկաւ փէշխունի վրայ մէ մենծ գաթիմ գընդի, որ ըսեմ որ, հըմա թէ Սարո ամուս փափխի չափ կար:

— Մամի ջան, մամի, հոգուդ մեռնիմ, էն ընչի հըմար է, էն մենծ գունդը, հարցրի:

— Եղիկ տարին է, դատեք առնիմ, ըսաւ մամն:

— Տարին է թէ որն է՛:

— Եզ կաղընդի տարին է, ըտուր մէջ փարա կը դնենք ու ըզման սաղ կեփենք, յետե տանը քանի հոգի որ կայ, էնքան էլ կտոր կէնենք ու ամէն մէկին մէ կտորմ կուտանք. ո՛ւմ փայի միջէն որ էլնի փարէն, էս տարուայ մեր տան դովաթը ընդուր գլխուն էլ կեղնի:

— Ըսել է թէ իմ փայի միջէն որ էլաւ, դովաթը իմ գլխուս կեղնի:

— Հա՛, դուրբան, դու պզտիկ ես՝ արդար ես, աղօթքը թէզ ընկնի կը Ասուտ անկաջը, արդենբու հըմար Ասուտ դարգայի դռները միշտ բաց ին, աղօթք երա, փարէն քեզի էլնի, որ մեր դովաթը ջահէնայ քեզի պէս:

Ես ըսաւ մամն ու ջեբէն հանեց մէ ճերմակ թայք շահանցմ, դրաւ գնդի մէջն ու հարս-ապլա-յիս էնքան տորոել տուաւ որ, էլ չիմացանք թէ շահանցը գնդի որ թարաֆն է. ընդից յետե տափկըցրաւ գաթի պէս, երեսին խաշմէրուկ ճըզեր քաշեց, կանկափով ու չամչով էլ նշխեց ու էնքան սապր երաւ, որ թնդիրը վառաւ, անցաւ, էն վաղը բերաւ մէ մենծ սալմ թնդրի տակն իջեցրաւ ու ուսուլով տարին իջեցրաւ թնդրի սալի վրայ դրաւ. ընդից յետե էրկու խէճիրկաթ էլ խաշմէրուկ թնդրի վրայ դրաւ ու վախվրխելէն վրէն ծածկեց:

Ել էզ իրկուն չեմ իմացել ուրախութենէս թէ ինչդ իմ անցրել. է՛՛, եզուց կաղինդ է, մենծ հորոդերս քեօխվայ է, գեղացիք բախով, զինով կու գան կաղինդը շնհաւորելու, մեր օղէն կը լցուին, դաւուլ զուռնով քէֆ կէնեն, Ես էրթամ կը խալֆիս, պապոնցս կաղինդը շնորհաւորելու. էլ փշա-տըլ չամիչը, ֆետըղը, կակալն ո՛ր, բաղաստան

կեղնի, Հըմա սապրս էլ չէ տանմ թէ ե՛ր պտի լուսանայ, Չէ՛, մէ հալով մութն ընկաւ, պարկանք քնելու:

Հըլա նոր էր խորոզը առջի բերանը կանչել, աչքս բացի, քնէս վեր թնայ որ ինչ, մեր տնեցիք քուլլի զարթնել, խառնուել են իրար, Հարսնեն ու աղջկենն որը խալէքն ու բարձերն ին ետխամիշ էրէ օղէն տանըմ, փուրմ, սարգըմ կոկըմ, որը տան մէջ փոռուան տեղերն ին փողվըմ, ծալք դնըմ, Թաժայ հարսը պապիս թէլը բոնէ շորերն է հագցնում, Մամն էլ կճուճները թնդրէն հանէ, կերակուրները չանդընենն է լցնըմ՝ ու օղէն հաց տանելու թագարուք տեսնըմ:

Մէ քանի դաղխից յետե ամէն ինչ սարգի էր, օղէն խալէքը փոխն, բարձերը շարին, սուրֆէն դրին ու վրէն էնքան լօրու, կարթօլի ու տօլմի չանդներ դրին որ էլ ասեղ քցելու տեղ չկար, գաթէն ու հալուէն էլ որ թագարայ էր էրած, Մէ մէլ տեսնիմ պապս գաւազանը ձեռին քոթ-քոթալով էկաւ, սուրֆի վիրակը, օջիթ քովը նստաւ, Ընդուր յետե էն էլ մամն էկաւ քովը նստաւ, Ընդից յետե մենծ հորոդերս, Ակո ամիս, պիճի ամիս, կատաշս, Սարո ամիս, տացուս, տատաս ու ափէրս էկան, սրով, յառաջ պապիս ձեռը, ընդից մամիս ձեռը պագին, կաղինդը շնհաւորին ու սուրֆի չորս կողմը ջոլըրուան կայնան, Յետե սրով էկան մենծ ապլաս, պիճի անաս, հարս-խաթունը, հարս-ապլան, խանըմ-ապլան, խաթուն-մայրիկը ու թաժօթ հարսը պապիս ու մամիս ձեռքը պագին ու օղի ցածի թարաֆը բարե բոնին կայնան, Ե՛՛, հըմի սրէն էկաւ մեզի՝ տղոնցն ու աղջկներուն. հմա մեր անոններն էլ որ մէկ մէկ տամ, էլ ճօթը չի գայ, Իրար յետեից գնացինք պապիս ու մամիս ձեռքը պագինք, ընդդք էլ մեր էրեսները պագին ու քովերը դրած մաղեթով մէյվէքէն մէ մէ բուռ լցին մեր փէշերը:

Եր էս չէշիտ քուլլիքս պապիս, մամիս կաղինդը շնհաւորինք պրծանք, ափէրս, հորոդրտանցէս ամենէն պղտիկը, բախու թասը լցաւ, տուաւ պապիս. պապս էլ թասը առաւ ու էս ըսաւ. «Ճղէք հարսներ, մատղշներ, բալէք ջան, քուլլիքիդ կաղինդը շնհաւոր եղնի, ապրիք, խնդաք, զօրանաք, Ասուտ անհատնելի հացն ուտէք. բարով խէրով մէկ էլ էս օրը համինք դուով, դըրկցով, տնով, տեղով, մենծով, պղտըկով. հմա վէ՛՛վ գիտէ, աշխարհ է, աջար ինչարի էն օրը ես էլ սաղ կը մնամ, որ էլի էս ուրախութենը տեսնիմ, Փուչ աշխարհ է, էսօր կանք, եզուց չկանք. իմ հալս ընձի մալում է, հայհայս գնացել՝ վայվայս է մնացել, Հմա ձեզի

քուլլըքիդ թամբայմ ունիմ տալու: Ինչդ որ ինչարի էս օրս ընձի էք հնազանդ էղել, ընձի տան մենձ ու կառավարող ճանչըցել, ձեր մէջը իմ ու քուկ չէ էղել, իրար հետ անուշ ապրել, անուշ մենձըցել, էն չէշիտ էլ իմ մեռնելէս յետև ձեր մենձ աղբօրը պտի գլուխ տաք, ընդուր ամէն մէխօսքը կատարէք ու ձեր հէրն ու մենձ աղբէրը ճանչնաք: Դու էլ, Աարգան ջան, քու աղբրտանցդ վրայ պտի աշես ինչդ որ քու հալալ տղոնց վրայ, Ձեր մէջը ջոկողութեն, իմ ու քուկ չպիտի էղնի: Իրար հետ կանակ կանրկի տուած հալալ գուլալ պտի աշխատիք, իրար հետ ուտէք: Աէվ որ ձեզնէն ծուռը քաշէ, ում միտքն որ ծուռը կէղնի էս օջախը քանդելու: Կայէնի անէճքը ընդուր գլխուն էղնի: Իրար հետ աշխատէք, իրար հետ ապրէք: մեննակ էղով դուք կրնաք ձեր դուշմանի աչքը հանէ, ձեր բարեկամներուն ինդացնէ: Քուլլիքդ էլ սաղ էղնիք: հայր Արրահամու: մեր Լուսաւորիչ պապի օրհնէքը ձեր գլխուն էղնի: Երկնաւոր Տիրոջ աչքը ձեր վրայ էղնի: Պատաւ: դու էլ սաղ էղնիս: քու էլ կաղինդդ շնհաւոր: Երկնաւոր Թագաւոր: Դու մեզի քու լուս արքայութենէդ չզրրկես: ըսաւ պապս ու թասը խմեց, Հօրօղբրտիքս բիրատի իրար հետ գլուխ տուին ու ըսին. «Անուշ էղնի, արար ջան» ու հարսնները սրով գնացին ձեռը պագին:

Ափէրս էլի թասը լցաւ ու տուաւ մամիս, որ առաւ ձեռնէն թասը ու ըսաւ. «Անուշ բալէք ջան, քուլլիքդ էլ կաղինդը շնհաւոր էղնի, քուլլիքդ էլ սաղ էղնիք: Մայր Աստուածածնայ օրհնէքը վըրէներդ էղնի: հող բունէք, ոսկի դառնայ, չոր քարին զիճէք, կանանչ դառնայ, Հախ-Տիրոջէն կը ինդրեմ մեղաւոր բերնոյս, որ ամէն մէկդ օխտը որդով սեղան նստիք, ծլիք, ծաղկիք, բաղդաւորիք: Այ տօ, դառաւ մամս զիպս պապիս, քու էլ կաղինդդ շնհաւոր, մեզի էլ ինչ է մնում: իրկուն առաւօտ ժամ էրթալ, աղօթք էնել, մեր հողու յետևէն ընկնել, որ Աստուած էլ մեր մեղաւոր հոգուն լուս ու ճարմ էնէ»: էս ըսաւ մամս ու խմեց: էլի հօրօղբրտիքս քուլլի գլուխ տուին ու ըսին. «Անուշ էղնի, անա ջան» ու հարսնները ձեռը պագին:

Եւմ էլ ափէրս լցաւ թասը ու տուաւ մենձ հօրօղբօրս: էն էլ առաւ թասը ու էս չէշիտ շնօխբլեց:

«Արար ջան, մենք ձեր օրհնութենին ենք կարօտ: Ճօթմ հաց որ պտի ուտենք՝ ձեր օրհնութենով պտի ուտինք: Թող Աստուած մեզի երկար կեանք տայ, ձեր հովանին մեր գլխէն չպակսեցնէ, որ մենք էլ ձեր թեկերու տակ ժողուած, ինչդ որ

հաւի ձագերը թխտի թեկերու տակ, ապրինք: Առանց մեզի ի՞նչ ենք — հողոց ու մոխրոց, Ձեր մէխրատը աւելի շատ աճէ, քան թէ աշխարհի խաղնէն: ձեր ոտները աւելի շատ բան գիտեն, աւելի շատ բան են տեսել, քան թէ մեր գլուխը ու աչքերը: Ձեր մեննակ նես ու գուս էնիլը՝ հաւին քշա էնելը աւելի բան է, քան թէ մեր տարիներով գլուխ գուս դնելը: հարուրներով աշխատանք նես բերիլը, Տէր Աստուածը թէ մեզի ուրախութեն պտի տայ, թող ձեզանով տայ: Աղբրտանք ջան, սաղ էղնիք, տարէքդ շնհաւոր: Աստուած մեզ էլ խելք ու կարողութեն տայ մեր ծնողներուն, մենձներուն հնազանդ էղնելու: ընդոց խօսքին անկանջ էնելու»: էս ըսաւ ու խմեց:

— Այ տօ, ըսաւ պապս մամիս, հերիք է էդ հարսններուն օտաց վրայ կայնեցնես է՛ մեզք են, առ գնա՛ տուն, դուք էլ հաց կերէք, քիչմ ուրախացէք: Ախր գեղի քեօխայ ինք, հըմի գրկցնները կուգան շնհաւոր կաղինդ էնելու: Գնացէք, բալաներ ջան, գնացէք դուք էլ քիչմ ուրախացէք . . .

Հա պապս խօսքը չէր ըսել պրծել, հա նոր մամս հա-հու էր ենրմ տեղէն վեր էլնելու, որ գոռում գոչումը, շամթէն ընկաւ. «Առա՛, կեցցէ քեօխայէն, ուռա՛, տաշչի, բիջօ, ուռա՛ . . .»

էդ մեր գրկցններն էին, որ գալըմ էին հօրօղբօրս կաղինդը շնհաւորելու:

էդ ձէնն որ չառան հարսնները, էլ չիմացան թէ ինչդ տուն փախնին. ափալ թափալ, որը կովերու արանքէն, որը գոմէշներու տալգէքովը տուն փախան: Ի՛, ըրա ամօթ չէ՞ խաղի տղամարդը գայ մեր ջահէլ ջուհուլը օրէն կայնած տեսնի: Մեննակ մամս էր որ ծանրը մենձ իրա քէֆին էրթըմ էր:

Քէֆ էնողները նես թափան ու բիրատի իրար հետ ծուացին. «Քարև մեզի, շնհաւոր կաղինդ» ու մէկ մէկ էկան արարիս ձեռը պագին, ընտից յետև հօրօղբօրս կաղինդը շնհաւորին ու մէ մէ բախու բութիլկա փէշերու տկէն հանին, սուրֆի վրայ գրին, որն էլ մէ մէ ջուխտ ոտից դրին հօրօղբօրս առաջն ու ըսին. «Քեօխայ ջան, քիչը շատի տեղ ընդունէ, դարուլ էրա՛ մենք էլ քուկդ ենք»:

Ափէրս բաղու թասը էրկնցրաւ գայողներէն մէկին՝ խնամի Սաքոյին, որ առաւ թասն ու էս չէշիտ շնօխբլեց: «Կենդանութեն, խնամի արար, ջան սաղ էղնիս, Աստուած որդիքդ սաղ պահէ, օջախդ հաստատ պահէ, հողուդ արքայութեն, Քեօխայ ջան, սաղ էղնիս, Աստուած քեզ էլ կարողութեն տայ մեր գեղը կառավարելու: աղբէր, ղօլայ բան չէ դատաւորութեն էնել, սէյր էնողին

դրայ կը թուայ՝ աշխարհի գործ է՝ ըզման կեղծի՝
 ետեանուորը ձիաւորի վրայ կը ծիծաղի։ Խնամի աղ-
 բրտիք ջանն սաշ էղնիք՝ կաղինգներդ շնհաւոր։
 Տէր Աստուած։ Գու մեր խեղճ ազգին լուս ու
 ճարձ էնես։ Էս ըսելով խնամի Սաքոս կոնծեց թասը։

Էս հաղաղնդայ՝ խալֆիս խալաթը միտս ըն-
 կաւ։ Էլ չաշեցի՝ վազդի դիպա տուն։ Մէ կամ-
 փանեայ էլ տանը հարսներն էին սարքել։ Մամս էր
 էդ կամփանի գլուխը։ Լարսներն էլ ըստեղ էման
 չէին ամանչըմ։ Ինչդ որ օգէն։ Բերններու եաշնաղ-
 ները յետ էին տարել։ ուրախ ուրախ ըսմ։ ծի-
 ծաղըմ ուտըմ։ Խմրմ էին։ Մենծ հարսները մա-
 միս հետ էին սուրֆա նստել։ պղտի հարսներն ու
 աղջկներն էլ ջոկ։ Ըստոնց կամփանի գլուխն էլ
 մենծ քուրս էր։ որ պղտի հարսները քուլլի խա-
 նըմ-աղայ էին ըսմ։ Էս վազդի ընկայ մամիս գիր-
 կըն ու ըսի։—Մամի ջանն խալֆիս խալաթը։

—Ա՛յ, դուրբանդ էղնիմ տիան բողջով կա-
 պած դրել եմ՝ դու թքներու վրայ, ա՛ն ու դնա՛
 ըսաւ մամս։

Էլ սապր չէրի՝ բողջէն գըրկըւորայ ու թաղմ
 որ խալֆոնցս տունը մէկ վազդի՝ նես մտայ օգէն
 որ տէրտէրը վիրելը։ օջիտ քովը նստել է։ ըն-
 դուրէն քիչմ ցած էլ խալֆէս է նստէ։ օգի սա-
 դըրներն էլ լիքը լցուած են ուրիշ մարդկանցով։
 Փափաղս վեր առայ։ գնացի առաջ տէրտէրի աջը
 համբուրի։ յետև բողջէն տարայ խալֆիս առաջը
 դրի ու ըսի։—Խալֆայ ջանն էս էլ քու փէշքաշդ՝
 մամս զրկեց։

—Ապրիս ըսաւ խալֆէս ու բողջէն վերցրաւ
 էն կողմ դրաւ։ Էս հաղաղնդայ էն նստող մար-
 դիկը աչքով ունքով էրին խալֆիս։ րախով լիքը
 թասը տուին ընծի ու ըսին։

—Ա՛ն, Ալէք ջանն առ մէ շնոխըլէ տեսներք
 ինչդ տղայ ես դառել։ ինչքան մարիֆաթ ես սոր-
 վել խալֆէցէդ։

Էս էլ թասը առայ ձեռքերէն։ գնացի տէր-
 տէրի աջը համբուրի ու բերի թասը խալֆիս տուի։
 «Ապրիս, ապրիս, ճուացին չորս թարաֆէն։
 տեսար, ինչ թէզ ֆայմաւ։ իրան թասը խալֆին
 տուաւ։ տեսար աղբէր, ինչ շնհոքք են առել տի-
 րացու Գւեղի մոնթիլը։ վայ հալալ էղնի քեզի՝
 տրացու Գւեղ»։

Էդ գովասանքէն խալֆիս ոտները գետնէն
 կտրան։

«Գէ, տիրացու ջանն, անձախ որ տեղն էկաւ,
 դու էլ գրբրու միջի էն խորճենկ բաներէն ըսա՛,
 անկանջ էնենք. հագամս փուշ աշխարհ է էս աշ-
 խարհը, քուլլի կերթան, կանցնին, մննակ էդ
 հոգևոր բաները կը մնան»։

Խալֆէս թանն առաւ ձեռը, դառաւ դիպա
 տէրտէրն ու ըսաւ։

«Տէրտէր ջանն, գիտես, կրակի առաջը չախ-
 ման դարկելու չի էղնի, դու որ կաս կրակն ես,
 ես չախմախն եմ»։

—Ա՛յ, օրհնած, դու ըսա՛, խալֆիս խօսքը
 կտրեց տէրտէրը. Յիսուս Քրիստոս եր որ էկաւ
 մկրտուելու Յովհաննէս Մկրտչէն Յորդանան գետը,
 Յովհաննէս Մկրտիչը ըսաւ թէ. Ահա՛ դառն
 Աստուծոյ, որ զայ մկրտիլ ընծէն. յետև էլ դառաւ
 Յիսուսին ըսաւ թէ. Ըստից յետև պարտ է ընծի
 մեղմանալ, քեզ ածել, եանի թէ ըստից յետև ես
 պտի յետ էրթամ՝ պղտկնամ, դու յառաջ պտի
 դաս՝ մենծնաս, Հիմի մերն է. ըստից յետև ես
 պտի հետը հետը յետ ընկնիմ, չունքի որ հալի-
 ւորցել եմ, դու ջահիլ ես, յառաջ պտի դաս։

—Գիտէք, ինչ կայ, ըսաւ խալֆէս. մէկ օրմ
 երոր Յիսուսի աշակերտները թօփ էղան քովը ու
 հարցրին թէ՛ Վարդապետ, ինչու մենք էլ Յովհան-
 նէսի աշակերտներու լման ծուճ ու պաս շենք
 պահըմ էն վաղըը Յիսուս ջուղար տուաւ թէ
 հըմի փեսէն մեր մէջն է, մենք հարսնըքի հետ
 ենք, երոր փեսէն կերթայ՝ հարսնիքը սօլֆ կեղնի,
 էն վաղըը մենք էլ ծուճ ու պաս կը պահենք,
 ըսդուր բաղալը կը հանենք։

—Մազաթ Յիսուս էլ հարսնիք գնաց, հար-
 ցըրաւ նստողներէն մէկը։

—Հա՛, ըրա՛, ըսաւ խալֆէս, Գալիլիա քա-
 ղաքում չէր, որ հարսնըքին ջուրը գինի դարձրաւ,
 տէրտէր ջանն։

—Գիտեմ, գիտեմ, ըզման է, վրայ բերաւ
 տէրտէրս։

—Հմի մերն է, աղբէր, յառաջ տարաւ խօսքը
 խալֆէս, քանի որ քէֆի, կեր ու խըմի վաղդ է,
 քէֆ էնենք, երոր ուրախութենի օրը կանցնի, էն
 վաղըը մենք էլ լաւ լաւ բաներ կը խօսենք ու ըս-
 դուր բաղալը հանենք կը, Հմի ողջ լինիք, կեն-
 դանութենն տէրտէր ջանն օրհնես ի Տէր. Ալէք ջան
 ողջ լինիս, խալֆէս դառաւ դիպա ընծի. թասդ
 ընծի, Աստու բարին քեզի, քեզի պէս աշակերտ-
 ներ շատ ունենամ, Գուլըքիդ էլ տարին շնհաւոր
 ողջ լինիք, ըսաւ խալֆէս ու խմեց րախին, թասը
 շրթխկալէն զարկաւ սուրֆի վրայ ու էման մէ ա-
 նուշէն ա-ա-ա՛՛՛մ էրաւ որ, ջուրը բերանս լցուաւ։

Խալֆոնցս տունը շատ չմնացի. ընտից գնացի
 քեռանցս կաղինդը շնհաւորելու, ճամփէն, որ
 գոռն առջէն անցնըմ եմ, քէֆի ու ուրախութենի
 ձէն է գալըմ, Փողը, տիկը, դաւուլ զուռնէն էլ
 որ, մարդու անկանջ են խլացնըմ, Գւեղի դալիղան-

լիքն էլ իրանց քայլան ձիանով դուս էին էկել Տէրտէրանց կալը ջիլիթ էին խաղըմ ու իրանց շնորհքը տեսցնելմ:

Քեռանցս կաղինդը շնհաւորելէն յետև գէշտան-գէշ իրկուայ դանգերու վաղգ տուն էկայ: Մերոնք էլ էկել թօփ էին էղել: չուկի ընդոնք էլ ընձէն յետև դնացել էին կաղինդ շնհաւորելու: որը քաւորանց տունը: որն էլ խնամոնց:

Նես մայ որ: մեր տնեցիք քուրսու չորս կողմը ջողըրուել: նստել են: Վազգի մամիս դիրկը ընկայ ու ըսի.

—Մամի ջան, կաղինդը պրծանք:

—Չէ, բայա ջան, ըսաւ մամս: Տլա մենծ բանը յետևն է:

—էլ ի՞նչ կայ որ:

—Հլա տարին չենք կտրէ:

—Որման պտի կտրենք տարին:

—Սապը էրա: Տմի կը տեսնես: Աղջի: Մագթանդ, տղամարդը քուլի օգէն է: ըսաւ մամս մենծ քուրոջս ու էլաւ հացի դօլաբէն հանեց էն մենծ բաղաջը: որին տարի էր ըսըմ: որ Տըմա ըսեմ թէ մեր գուծնի խարազանի պիճի թաքոի շափ կար: Գրկըորաւ էդ տարին ու էլաւ ասն էր-թիկը: յիրեք պտուա էրթէկի բողըրը պտըտցրաւ ու թըրփ: էրթըկէն ցած քցաւ տարին քուրսու վրայ: Անտից յետև նես էկաւ: առաւ մենծ դանակը: յերեք հեղ խաշակնքեց տարու վրայ ու խաշմէրուկ կտրեց: չորս մենծ կտոր էրաւ ու հարցըրաւ. «Մեր տնեցիք քանի՞ հոգի են: կեցի: ութը աղբէր: մէկ էլ հալիւորը իննը: Հմի տղայ թախոււմը: մամս սկսաւ մատնելու վրայ համբըել: Գրիգորս: Պետոս: Վարոն: Սաքոն: Խաչոն: Սենոն: Եղոն: Ալէքս: Արտաշս: Սահակը: էս տասը: ինն էլ: տասնիննը: Եդ տղամարդու թախոււմը: Հըմի օղուշաղը: օխտը հարս: էս ութը: Աղջկներ: դիմացըս կայնէք: ձեղ էլ համբըեմ: տեսնեմ քանիս էք: Աղջկները սրո՞ղ էկան մամիս դիմացը շարուան: Մամս էլի մատնելու վրայ սկսաւ համբըել: Մագթանդը: Հեքոս: Էան: Շուշանը: Սաթիկը: Նըխշունը: Հայիօն: Մարոն: Մաքոն: էս իննը: ութ էլ: տասնօխտը: Տղամարդը քանիս էր: տասնիննը.— հայ: տասնիննը: տասնօխտն էլ որ գանք ըզուր վըրայ՝ քանիս կենէ Ալէք ջան: հարցրաւ մամս ընձի:

—Աեցի: կեցի մամի ջան: ըսի: Տմի բաղմապատկեմ՝ կիմանամ: Չէ, էգիկ գոււմարումն է: պտի գոււմարեմ: տասնիննը՝ տասնօխտն էլ: տաս—տաս . . . քսան . . . քսան . . . քսան . . . եռսուն. եռսուն . . . եռսուն վեց. եռսուն վեց հոգի կենէ մամի ջան:

—Հայ: որ ըզման է՝ եռսունը վեց կտոր էլ պտի էնենք տարին: որ ամէն մէկին մէ կտոր հասնի:

—Ըրա չօրնեբրուն ու մշկներուն: հարցրի էս:

—Ընդոց էլ ըսզուր բաղալը ուրիշ բան կուտամ: ըսաւ մամս: էսիկ միննակ մեր տնեցոց վրայ պտի փայ էնեմ: որ իմանանք թէ մեր տան դօվլաթը ո՞ւմ գլխուն է: շահանոցը ո՞ւմ փայի մէջէն կէլնի: էս ըսաւ մամս ու տարին եռսունը վեց հաւար կտոր էրաւ: Իննը կտորը դրաւ սինու վրէն: զրկեց օրէն: մնացածն էլ ամէն մէկիս մէ կտոր տուաւ:

Հըմի առել ենք ձեռներս մեր փայերն ու դողըմ ենք: աջար որիս փայի մէջէն՝ պտի էլնի շահանոցը: ու վախվրխելով ուտըմ ենք: Մէ մէլ տեսնեմ Եղօն ճուաց. «Ահայն, շահանոցը իմ փայի մէջն է»: Ըսելն իմացաւ Եղօն: էն սըհաթը թափանք խեղճի գլխուն: ինչդ որ լաշ ուտող գէշ զշերը ջամտըքի վրայ: քաշկըտըմ ու ըսըմ ենք. «Ո՛ւրա: ո՛ւրա: տեսնիք»: Մամս էլ պուշ պուշ պագպըզըմ է Եղոյի ձեռներն ու թշները ու հետը ըսըմ: «Ո՛ւյ: Եղօ ջան: հոգուդ մեռնիմ: շահանոցը քեզի էլաւ: մեր դօվլաթը քու գլխուդ է ու քեզի պէս ջահէլ»:



Ն Ի Ի Թ Է Ի

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

Այնքանցնելով Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակների ցուցակի տեսութիւնը: իմացանք: որ բողոր օրինակները բաժանուում են երկու խմբի: ուստի անհրաժեշտ է երկու խմբերի տարբեր ընթերցուածներն առաջ բերել: Նախ քան տարբերութիւններն յառաջ բերելը: հարկաւոր ենք համարում ընթերցողներին տալ մի շատ կարեւոր գրութիւն Աղուանից պատմութեան նախնական ձևի և խմբագրութեան վերաբերութեամբ: Գրութեան վերնագիրն է՝

—«Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն»:

Սոյն գրութիւնը հրատարակում ենք Մայր Աթոռոյս մատենադարանի համար 58 և 100 ձեռագրերից: որոնք նոր և սխալաշատ գրութիւններ են: առաջինը գրուած է Էջմիածնում 1767 թուականին: Ներսէս Հնորհալու ընդհանրական թղթերի